Բոլոր մեր ասածներից՝ կարծում ենք, կարելի է հետեւեալ եզրակացութիւններն անել.

ա. Խորենացին ճանաչել է Սոկրատի եկեղեցական պատմութեան եօթներորդ դարու հայերէն թարգմանութեան համառօտութիւնը կամ՝ որ նոյնն է, Փ. Սոկրատը, եւ օգտուել է նորանից։

բ. Խորենացին ճանաչել է Ս. Աղեքսանդրոսի Վարքի նոյնպէս եօթներորդ դարու վերջում կատարուած Ընդարձակ եւ Համառօտ հայերէն թարգմանութիւնները, եւ օգտուել է նոցանից։

ԳՐ. ԽԱԼԱԹԵԱՆՑ

## ՑՈՒՑԱԿ ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԱՑ ՍԱՆԱՍԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ Ի ԿԱՐԻՆ

(Շարունակութիւն եւ վերջ)

### 36.

### ՏԱՂԱՉԱՓՈՒԹԻՒՆ ՆԱՐԵԿԱՑ

1830 (?)։

*ԹՈՒՂԹ՝ 116. էջ 227: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 34 սմ. երկ. 22,5 սմ. լայն. 1.7 սմ. հաստ.: — ՆԻՒԹ՝ կապոյտ թանձր թուղթ: — ԿԱԶՄ՝ չունի: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն. իւրաքանչիւրը 29×9.5 սմ. միջին լուսանցք չունի — ՏՈՂ՝ 32: — ԳԻՐ՝ նոտր.: — ԶԱՐԴ եւն չունի: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ մաքուր եւ նոր, տառասխալ չունի: — ԴԱՏԱՐԿ թուղթ՝ ընդ ամէնը 13 էջ: — ԳՐԻՉ՝ Նուիրողն Ղազարոս պատուելի Վահանեան Կարնեցի: ԺԱՄԱՆԱԿ 1830 (?): Յիշատակարան եւն չունի:*

Օրինակ մը։

Տաղաչափութիւն Նարեկայ աղօթից սուրբ գրոյն Գրիգորի․

Հրեշտակակրօն մեծի վարդապետին
Ի խորոց սրտից խօսք ընդ աստուծոյ

Բան Ա։

Զայն արկանեմ հառաչանաց
Թախանձանօք հեծեծանաց
Վերընծայել քեզ ի բարձունս
Ո՛վ դու գիտօղ սրտի գաղտնեաց
Եդեալ ի հուր թախանձանաց
Իմում անձին տոչորանաց — եւ այլն։

### 37.

### ԼՈՒԾՄՈՒՆՔ ԲԱՆԻՑ ՊՐՈԿՂԻ

ՌՃ — 1651։

*ԹՈՒՂԹ՝ 218. էջ 431: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 16 սմ. երկ. 11 սմ. լայն. 2,5 սմ. հաստ.: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ մագաղաթապատ փայտեայ: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ մաքուր: — ԳԻՐ՝ նոտր: — ՎԵՐՆԱԳԻՐ եւն կարմիր-վարդագոյն: — ՏՈՂ՝ 19: — ԶԱՐԴ, ՊԱՏԿԵՐ չունի: — ԴԱՏԱՐԿ թուղթ 5 էջ: — ԳՐԻՉ՝ Սիմէօն Գառնեցւոյ եպիսկոպոս:*

Նախաբանէն մաս մը. "ի թարգմանչացն մերոց առաջնոց ի Մովսէս ասեմ եւ ի Դաւիթ եւ յընկերացն նոցին որք աթենական ուսմամբն էին կրթեալք ոչ ունիմք զպրոկղս թարգմանեալ կամ մեկնեալ գուցէ թէ թարգմանեալ իցեն, այլ յանհոգութենէ ազգի եւ յանուսումնութենէ սպառեալ է… յորոյ օգտութիւնն հայեցեալ հարկեցայ առնել տեսողաց տեսանել զտեսութիւն սորա օգնականութեան հոգւոյն այս եւ ժամանակութեան աղօթից ձերոց, բայց յառաջագոյն ունի բնաբանն ընդ իւր լուծմունս ի յամելախօսէ եպիսկոպոսէ ումեմնէ. եւ յայլմէ թարգմանեալ բառ բնաբանին. այլ դժուարաւ մուծանէ զմեզ ի բնաբան անդր։ Նաեւ ի թարգմանութենէս ունի խանգարումն իմացուածոց. զի ի վրաց լեզուէ է թարգմանեալ ի հայ բարբառ ի Սիմէօնէ քահանայէ յաշխատասիրէ յումեմնէ։ Եւ յառաջելոցս վկայ ունիմ զգիրքս զայս. զոր ոչ է անհնար գտանել ձեզ հանդերձ իւրով հին մեկնութեամբն զի ի յետին ժամանակս է թարգմանելութիւն սորա, եւ ըստ նիւթականին չինուածոյ նոր։ Նաեւ յոլովք բազմացուցին օրինակելով վասն անծանօթ անուանն, յորոյ տեղեկեալ եղեւ ի սա՛ ըստ կարի մերում բացայայտել խնդրողացն զզօրութիւն։„

Ունի միայն մէկ յիշատակարան՝ ամէնէն վերջը. "Եղեւ լուծմունքս բանից պրոկղի պղատոնական իմաստասիրի, ի հազար երրորդի եւ ի հարիւր երրորդի թուականութեանս հայոց, ի նուաստ Սիմէօնէ գառնեցւոյ եպիսկոպոսէ որ աղաչեմ զհանդիպօղսդ նորել ինձ ի ձեռնամխութիւնս բանիցս այսոցիկ, զի գուցէ ով հանդիպօղ, որում աստուած եւս պարզագոյն տեսութիւն շնորհիցէ, բայց առայժմ շնորհ ունիցի շնորհաց պարգեւողին աստուծոյ, որում անբաւ փառք ըստ անբաւութեան իւրում։ Ամէն։„

### 38.

### ՈՍԿԵՓՈՐԻԿ

ՌԾԷ = 1608։

*ԹՈՒՂԹ 207. էջ չէ նշանակուած: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 14 սմ. երկ. 10.5 սմ. լայն. 4 սմ. հաստ: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ կաշեպատ փայտ: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ շատ որոշ, բայց ոչ գեղեցիկ: — ԳԻՐ՝ հաստ նոտրագիր: — ՏՈՂ՝ 16: — ՎԵՐՆԱԳԻՐ եւն կարմիր երկայն: — ԳԼԽԱԶԱՐԴ ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴ 15՝ տգեղ: — ԴԱՏԱՐԿ թուղթ մէկ էջ: — ԳՐԻՉ՝ Սարգիս: — ՍԿԻԶԲԸՆ եւ ՎԵՐՋԸՆ կան երկերկու թուղթ մագաղաթ, հին բոլորգիր ճաշոցի մնացորդ: — ՏԵՂ՝ Ռոտոս:*

Կը պարունակէ.

1. Շարական խաչի "Այսաւր ուրախացան երկինք եւ երկիր մեծաւ. այսօր բարգաւաճեալ պայծառացաւ եւն.„ Որու վերջը՝ "բարեխաւսութեամբ ամենայաղթ եւ աստուածընկալ սուրբ նշանին քո քրիստոս աստուած մեր ազատեա ստացողի գրոցս։„

2. Գիր ուրբաթի զոր կարդան ի վերայ հիւանդաց, որու վերջը՝ "յորս վերայ զայս գիրս կարդան ի վերա նեղեալ հիւանդաց յուսով հայցողացն

digitised by A.R.A.R.@

հաւատով բժշկին եւ ազատին ամենայն ցաւոց եւ ի նեղութեանց եւ ի պէս պէս հիւանդութեանց, ամէն. քրիստոս աստուած քո առատ ողորմութեամբդ ողորմեաց ծառային քո սարգսին եւ ամենայն յարեան քո:„

3. Տեսիլ սուրբ աստուածածնին զոր ետես սուրբ կոյսն վասն դժոխոցն. որոյ վերջը՝ "բարեխաւս սրբուհւոյ աստուածածնի անարատ ծնաւղի քո քրիստոս աստուած, ողորմեա ստացողի գրոցս:„

4. Հարցմունք սրբոյն գրիգորի լուսաւորչին եւ պատասխանի հրեշտակին վասն որդւոց մարդկան. որոյ վերջը՝ "բարեխաւսութեամբ սրբոյն գրիգորի լուսաւորչին մերոյ քրիստոս աստուած մեր. ողորմեա ստացողի. եւ ինձ մեղապարտ գրչիս եւ կրդցողաց եւ լսողաց եւ որ ամէնն ասեն ամէն:„

5. Թուղթ տեառն մերոյ յիսուսի քրիստոսի. որ յառաքեցաւ յերկնից ի տաճարն սուրբ. վերջը՝ "Զստացող գրոցս պահեա տէր ի կամս քո. եւ քեզ փառք բերանոյ իմոյ ամէն:„

6. Երանելոյն եփրեմի ասացեալ է վասն պահելոյ սուրբ կիրակէին: Որոյ վերջը՝ "տէր յիսուս աստուած բարի. ըզստացողս (երկու տող բաց) եւ զամենայն զարմս նորին պահեա ի փորձանաց չարին եւ ի մեղաց փրկեա զնոսին. եւ ի յաւուր դատաստանին արժան արայ տեսլեան քոյին. ջընջեա ըզգիր մեղաց պարտին. եւ դասեցոյ յաջակողմին վասն քոյին սուրբ ծնաւղին. ամենաւրհնեալ սրբոյ կուսին. եւ զեղկելի գծող սորին. զսարգիս գծողս. զոյս. կեսարացին մի մոռանար յայնմ աւուրն. Եւ որ ասէ հայր մեր որ յերկինդ ես մանաւորեայ սրբոց քոյին:„

7. Վկայաբանութիւն կամաւոր աղքատին Աղէքսանոսի մարդոյն աստուծոյ. վերջը՝ "Քրիստոս աստուած սուրբ նահատակի բարեխաւսութեամբն ողորմեա ստացողի գրոցս (մէկ տող բաց) եւ իւր ծնաւղացն եւ ամենայն զարմիցն եւ զաւակացն կենդանեաց եւ հանգուցելոցն եւ ինձ մեղաւք մեռեալ սարգիս գրչիս եւ կարդացողաց եւ լսողաց եւ զիւր զամէնն ասէ ամէն հայր մեր:„

8. Աղաւթք աբբա եփրեմի ասացեալ է. Տէր աստուած զաւրութեանց աղաչեմ զքեզ.... եւն. որոյ վերջը՝ "նոյն ողորմութեամբ քո քրիստոս աստուած մեր գթա ի մեղուցեալ ծառայքս քո եւ ողորմեա ստացի գրոցս (երկու տող բաց) եւ իւր նախնեացն կենդանեացն եւ հանգուցելոցն եւ զսարգիս զգծողըս որ ոչ կարացի հասու լինել եւ յայսմ ամի մեղաւք ի հող մահու անկայ եւ միոյ յիշմանն առ տէր կարաւտացայ. եւ որք յիշեալք լիցիք ու դուք յիշեալ լիցիք ի քրիստոսէ յոյսոյն մերոյ որ է աւրհնեալ յաւիտեանս ամէն. հայր մեր որ յեր":„

9. Վասն աղաւթի եւ արտասուաց խոստովանութեան. որոյ վերջը՝ "Տէր յիսուս փրկիչ եւ բարերար ողորմի ստացողի գրոցս (երկու տող բաց) եւ ընտանեաց նորին եւ ամենայն արեան մերձաւորացն եւ ինձ անարժան սարգիս գերելոյս մեղաւքս ի հողս որ եմ անկեալ եւ կարդացողաց եւ լսողաց եւ որ զամէն ասէ ամէն հայր":„

10. "Աղաւթք սրբոյն պաւղոսի ասացեալ է ամենայն դեղի:„

11. "Յաղագս դաւանութիւն հաւատոյ զոր մեղապարտ վարդան գրեցի աստուածային գրոց: "Ապայ եւ զՏէր կարապետ քահան. անմոռաց յիշեսջիք եւ մի ոք հանցէ զանուն սորա ի գրոցս որ եւ գրէ իսկ որ գրէ. աստուած անջնջելի գրէ զանուն նորա ի գիրն կենաց ամէն:„

12. "Վասն չբանբասելոյ եւ չդատելոյ զեղբայրս եւ զքահանայս եւ զվարդապետս„: Որոյ վերջը՝ "Քրիստոս աստուած ողորմի ստացողի գրոցս բարեխաւսութեամբն եւ ամենազաւր սուրբ խաչին փրկեա զմեզ ի բանբասանաց մեղաց եւ յամենայն աղտեղութեանց, Մանաւանդ ստացողի գրոցս եւ զեղկելի դրիչս եւ երկնից արքայութեանդ արժանի արայ եւ քեզ փառք եւ ամենայն բերանոյ եւ ի մեղաւորէս ամէն:„

13. "Սուրբ հարցն ուղղափառաց հաստատեալ ի պատճառս նաւակատեացն անհասից. Որոյ աղաւթիւքն ողորմէ քրիստոս աստուած ստացողի գրոցս .. եւ ամենայն յարեան մերձաւորաց. կրդ" եւ լսողաց:„

14. Մեղայ (կրօնական եւ աշխարհական). որոյ վերջը ՝խոստովանանքս է պատուական յոյժ գովելի եւ անման արտասուաթոր հառաչական է ասելի եւ է յանդիման:„

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ: "Փառք համագոյ եւ միաւորական անբաժանելի սուրբ երրորդութեան եւ մի աստուածութեան հաւր եւ որդւոյ եւ հոգւոյն սրբոյ այժմ եւ միշտ". Աստանաւր յանգ ելեալ կատարեցաւ սուրբ գիրքս որ ասի ասկի փորիկ. ի քաղաքս բալյասս ի դուռն ընդ հովանաւ սուրբ հրեշտակապետին: Ձեռամբ նըւաստ եւ ներգեւեալ ոգոյ սուտ անուն սարգիս սակաւ գրչի եւ ծնաւղացն տէր կարապետին, որ յառ աստուած փոխեցան. ամէն: Դարձեալ աստուած ողորմի յակոբ վարդապետին հոգոյն եւ տէր դաւիթին հոգւոյն որ այս աւրինակս տվին որ գրեցի այս սակաւ նորա. Դարձեալ աստուած ողորմի կիրակոսի ամիր աղիզին հոգոյն. եւ իւր հաւատար ննջելոցն հոգոյն. որ խիստ պաղու ձմեռ էր որ նստայ աւուրն ի կրակին դէմ գրեցի: Գրեցաւ ի թվին ՌՆԾԷ յամսեանն փետրվար ԺԹ էլի. պահուցն աւաջի շաբաթն: Արդ աղաչեմ զամենեսեան որ հանդիպիք սմայ կարդալով կամ աւրինակելով անմեղադիր լերուք սակաւ գրիս սղալանացս եւ խոշորանացս զի մեր պակասութիւնն շատ է եւ ձեր իմաստութիւն յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր, ամէն. հայր մեր որ յերկինդ ես սուրբ եղիցի:

2. Օտար գրչէ կան. «Ի թվին ՌՄԾԵ ինաէ ի յամսեանն մարտի ԻԲ ինաէ յիշատակէ վահէ կապէնի սուրբ աստուածային տէր ղազարի որդի յարութիւննի վախտէմ իռակլնի քըրի նեզիասբէթի քըրի սարայի նեզրայրի ալիքսանի նեղբայրի տօնապետի աների մահտէսի ատէքսաննոսի սնեքաշի սարայի պատարագ մատուցանենք ամէն:„ "Թվ. ՌՃԳԼԱ ին դեկտեմբերի ԻԴ օրն շափաթ ծընաւ տէր քիրքորի որդի տիրացու միքայէլի որդին ղազարըն որ այլ վի դեկտեմբերի ԻԸ օրն գ. շապտի տէր ավէտիսի ձեռանք կընքէվեց որ է քուրդղուսայ պաճ ընքայ պայպըն պօեայճի մ?ոի ակոբ լըքանուն աեն եայըլըճի.„

digitised by A.R.A.R.@

## 39.

### ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԺԶ—ԺԷ. դար:

*ԹՈՒՂԹ 105. էջ չէ նշանակուած: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 14 սմ. երկ. 10 սմ. լայն. 2 սմ. հաստ: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ կաշեպատ խաւաքարտէ. ետեւի կողը միայն մնացած, մաքուր բոլորգիր: — ՎԵՐՆԱԳԻՐ եւն կարմիր: — ՏՈՂ՝ 16: — ԴԱՏԱՐԿ թուղթ՝ 3 էջ: — ԶԱՐԴ եւն չկայ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ սկիզբէն պակաս: — ԼՈՒՍԱՆՑՔՆԵՐՈՒՆ ծայրը այրած. թուղթերը դեղին բայց գիրերն անեղծ. — ԿԱԶՄԸ քրքրուած: — ԳՐԻՉ եւ ԺԱՄԱՆԱԿ անծանօթ: Այս գիրքը նուիրած է Վարդգէս էֆէնտի՝ 26 Յունիս 1894:*

Մատեանս կը պարունակէ 1. Տօնացոյց. 2. Ժամագրքէն մաս մը. 3. Գանձեր. եւ 4. Պատմութիւն վասն տումարաց որմէ ետքը 14 թուղթ տոմարական աղիւսակ:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ. Առաջին գրչէն. «Յորժամ մատչիս ի սուրբ խորանն անդ յիշեսցես զմեր ննջեցեալս: Յորժամ առնես զպատարագն յիշեա եւ զիս զմեղուցեալս: Առաջի աստուածն տեառն որ ի խաչին պատարագեալ: Զի եւ մեզ տէր ողորմեսցի ի միւսանգամ իւր գալստեանն: Հայրն փառք որդւոյն պատիւ եւ սուրբ հոգւոյն այժմ յաւիտեան յաւիտենից քրիստոս աւրհնեալ ի հաւիտենից»:

2. Օտար գրչէ. «Ով էսէր աղօթուն յիշեայ քու տէր Նարինն աստուած յիշէ քու յիշօղն Ամէն»:

3. Այս օտար գրչէն է նաեւ «Տաղ սրբոյն Կէորքայ զօ» ռամիկ լեզուով եւ թուրքերէն բառերով:

---

## 40.

### ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԺԷ—ԺԸ. դար:

*ԹՈՒՂԹ 136. էջ չէ նշանակուած: — ՄԵԾՈՒԹԻՒՆ 12·5 սմ. երկ. 9 սմ. լայն. 3 սմ. հաստ: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ կաշեպատ փայտ: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ խառնակ: — ԳԻՐ սկիզբէն քանի մը թուղթ բոլորգիր եւ յետոյ նոտր: — ՎԵՐՆԱԳԻՐ՝ եւն կարմիր-վարդագոյն: — ՏՈՂ՝ 17: — ԴԱՏԱՐԿ էջ ԶԱՐԴ եւն չունի: — ԳՐԻՉ՝ Գրիգոր: — ԺԱՄԱՆԱԿ անծանօթ. թէ սկիզբէն եւ թէ մէջէն ունի պակասներ:*

Կը պարունակէ. 1. Տօնացոյց մը. 2. Քարոզներ. 3. Ճառ. 4. Դաւիթ անյաղթի խաչի ներբողեանը տաղաչափեալ Ներսէս Տարօնացիէն. 5. Աստուած անեղ. 6. անվերնագիր հատուած մը. Հայերէն փաստանուններ, որոնց վրայ աւելցուած են օտար գրչէ այլեւայլ տեղեկութիւններ աւետարանիչներու, նահապետներու եւն վրայ:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ. «Չարաւ ծրող գըրիս. Գրիգոր յիշել աղաչեմ եւ մի բերան ողորմիս»:

---

## 41.

### Ն. ԼԱՄԲՐՈՆԱՑԻՈՅ ԳՐՈՒԹԻՒՆՔ

1822:

*ԹՈՒՂԹ 217. էջ 430: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 30·5 սմ. երկ. 21·6 սմ. լայն. 3 սմ. հաստ: — ԿԱԶՄ՝ խաւաքարտ բարակ կաշիով պատած. գրքին կռնակը, կողերը եւ եզրերը ոսկեզօծ: — ՆԻՒԹ՝ նոր թուղթ Gior Magnani, Al Masso դրոշմով: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ միջին նոտր, շատ մաքուր եւ առանց տառասխալի: — ՏՈՂ՝ 33: — ՊԱՏԿԵՐ, ԶԱՐԴԱԳԻՐ եւն չկայ: — ԴԱՏԱՐԿ թուղթ՝ սկիզբէն, մէջէն եւ վերջէն մէյմէկ հատ. սկիզբի առաջին էջը յետոյ լեցուած: — ԳՐԻՉ՝ ԹՈՒԱԿԱՆ եւ ՏԵՂ Տիրացու Նազարէթ դպիր պօլսեցի. Կոստանդնուպոլիս Պերա. 1822:*

Կը պարունակէ.

1. «Տեառն Ներսէսի եպիսկոպոսի Կիլիկեցւոց Տարսոնի խորհրդածութիւն վասն Ուղղափառ Հաւատոյ եկեղեցւոյ Որ ի սուրբ Երրորդութիւն, եւ ի Տնօրէնութիւնն Քրիստոսի:» 150 էջ: Որմէ յետոյ մէկ թուղթ պարապ:

2. «Մեկնութիւն պատարագամատոյց աղօթից». 153—370 էջ, որուն վերջը՝ «Նորին սրբոյն Ներսէսի յիշատակարան:»

3. «Հարցաքննութիւն առ օրէնս քրիստոսի. եւ հաստատութիւն թէ ո՛չ պարտ զվիճակ եկեղեցական աստիճանաց ձգել ըստ մարմնական առհմութեամբ:» 371—400 էջ: Որու վերջը՝ յիշատակարան մը, տես վարը:

4. «Ներսէսի լամբրոնացւոյ արքեպիսկոպոսի տարսոնի կիլիկեցւոյ պատասխանի թղթոյն վարդապետին առ աէ որդւոյ. եւ նորին նմանեաց ձորոյ գետացւոյ եւ հաղբատացւոցն առ....:» Էջ 401—413:

5. «Թուղթ ի Ներսիսէ արքեպիսկոպոսէ կիլիկեցւոյ տարսոնի, պատասխանի յաւական արդելական ճգնաւորի ի մեծն անտիոք. յորում լուծանէ զհարցումն կղերիկոսացն անտիոքու. վասն որ ի հայք տաւուածային շնորհի ճշմարտութեան ի վերայ քահանայական կարգի եւ ժողովրդականաց ուղիղ հաւատոյն որ ի քրիստոս:» 414—423 էջ: Որու վերջը՝ նմանապէս յիշատակարան մը: Տես վարը:

6. «Գլխագրութիւնք հռոմոց, զորս պահանջէին առ ի մէնջ ի պէտս խաղաղութեան: Ընդ որս եւ լուծմունք առ ընթեր եդեալ»: 424—430 էջ:

7. «Խնդիրք հայոց եւ հռոմոց:» Էջ 430:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ: Էջ 371—400էն ետքը «Օրինակեցաւ խորհրդածութեան եւ մեկնութեան պատարագի գիրքս սրբոյն Ներսէսի լամբրոնացւոյ՝ յընտիր գաղափարէ բաղդատելոյ ընդ երիս հնագոյն օրինակս՝ զորոց զտարբերութիւնսն նշանակեցաք ի լուսանցսն ամենայն ճշտիւ, ի պէտս գերապատիւ Տեառն Հայր Յովսէփ վարդապետի, ի նուաստ գրագիր տիրացու Նազարէթ դպրէ պօլսեցւոյ՝ որ ի պերա՛ յամի տեառն. 1822: ի Կոստանդնուպօլիս:»

2. Էջ 423էն ետքը «Ի վերջոյ սոյն յաւելան ի վերոյիշեալ գրագրէս եւ երկու թուղթք երանելւոյս որոյ առաջինն է առ... այս թուղթ փոքր մի թուի աղաւաղ, եւ ի սոյն ինչ ընդհատեալ ի բառից ոմանց. բայց մեք որպէս գտաք ի գաղափարին, այնպէս օրինակեցաք. եւ երկրորդն է առ յաւուր յոյն արգելական ճգնաւորն. զայս յետին թուղթ գտաք ի ձեռագիր ընդհանրականի միում՝ բոլոր գրով գրեալ ի Թուման

digitised by A.R.A.R.@

գրչէ ի խորին կուրութեան՝ անպիտան՝ ի… Հեթմոյ՝ ի թուին Հայոց ՉԾԱ: Արդ՝ որք միանգամ հանդիպիք սմա և վերծանութեամբ նորին զբօսնուք, յիշեսջիք յընդունական աղօթս ձեր զվերոյգրեալ մեղապարտ նուաստ գրիչ գրոյս, զի և դուք յիշեալ լինիջիք ընդ հաւատարոցն զպատուէր սիրոյն քրիստոսի:»

3. Դարձեալ՝ էջ 430էն ետքը. ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՍ այլ ուրուք է (գաղափարին գրչին:)

«Զատուցողիս կեանք զատուցողն իւր յոգի. զատուցողս Ներսէս, յայժ վերջացեալ աշակերտութիւն և որդիութիւն համանուն սուրբ հօրս, որոյ փափաքմամբ ստացայ սրբանոցս հարեալ յոգի սիրով, յաւելի զսա ի մթերս աստուածային շտեմարանաց. ընդ կրկնակին և մաղթելով ամփոփել: Արդ եղիցի յիշատակ երեցն ի մի բան յօգնաւորել մեզ զսոյն տաւաղին, և ստացողին ընդ աշխատելութիւն:»

Զայս յիշատակարան գտայ ի գաղափարին, և մեք ևս գրեցաք, որպէս զի մի՛ կորնչիցէ անմասն ի վարձուց աղօթից բարեսէր վերծանողիդ:»

Աստ ատակ տարբեր գրով և կարմրախառն սևամելանով՝

«յովսէփ. վարդապետ. մարգարեան.»

Բայց տառի՝ առաջին էջին վրայ՝ օտար գրիչներէ.

«Աւետիս Տ. Յովակիմեան. Յարութիւն. վաճառեցէք զինչս ձեր և տուք զողորմութիւն. և պարտէք. քարոզարկիրքս է խաւական գալուստին բարի վկելու տայէ՝ Մարզպան քաղաքը Վաւրատան լեռան քաղաքն է Գաղիոյ Վէննայ անգղիոյ մայրաքաղաք աստեղաց Կ. Պօլիս է. Վարդան. արժանապատիւ սուրբ հայր իմ:»

---

## 42.

### ՏՕՆԱՑՈՅՑ

### ԺԶ—ԺԷ դար:

*ԹՈՒՂԹ 156. էջ՝ չէ նշանակուած: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 13 սմ. երկ. 10 սմ. լայն. 3 սմ. հաստ: — ՆԻՒԹ՝ հաստարակ թուղթ: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ բոլորգիր, բաւական մաքուր: — ԶԱՐԴ, ԴԱՏԱՐԿ թուղթ՝ չկայ: — ԿԱԶՄ՝ կաշեպատ փայտէ: — ՏՈՂ՝ 13: — ԳՐՔԻՆ թէ սկիզբէն եւ թէ վերջէն պակաս է. ուստի եւ ԺԱՄԱՆԱԿ, ԳՐԻՉ, ՏԵՂ անծանօթ: Չկայ նաեւ ոչ մէկ լուսանցագրութիւն. տեղ մը միայն գրուած է «Թանակափորձ» եւ ուրիշ տեղ մը «գրիչափորձ»:*

---

## 43.

### ՏԷՐ ԵՂԻՍԷԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

### ՌՄՂԴ = 1845.

*ԹՈՒՂԹ 11. էջ՝ չէ նշանակուած: — ՄԵԾՈՒԹԻՒՆ 21·5×16 սմ: — ՆԻՒԹ՝ հաստարակ թուղթ: — ԳՐՈՒԹԻՒՆ նոտր. մաքուր: — ԶԱՐԴ չունի: — ԴԱՏԱՐԿ թուղթ 2 էջ: — ԿԱԶՄ չունի: — ՏՈՂ՝ 27: — ԺԱՄԱՆԱԿ ՌՄՂԴ յունվար ԻԹ: — ԳՐԻՉ Տէր Յարութիւն քահանայ երեմիաեան: — ՏԵՂ՝ «Խարփերդ» Մատէն:*

Առաջին էջին վրայ գրուած է.

«Տետրակ որ դուշի տէր եղիսայի պատմութիւնն Արարեալ և շարադրեալ յաւէժմին հաւատացելոց Ականատես անձնէ. ի ռամկական բառով զի ընթերցողք և ունկընդրողք հասկացողք ի միտ առցէն ամէն թվին ՌՄԽԵ յունվարի Ը ին որ ի քաղաքըն խարփերդ Գրվեցաւ տետրակս ՌՄՂԴ·ին. յունվարի ԻԵ որ է մատան ձեռամբ տէրտէն յիսուսի յետնեալ տէր յարութիւնին մեղաւոր քահանայի երեմիեան:»

Նահատակի մը պատմութիւնն է այս տետրակը՝ որու վերջին երեսը գրուած է. «Գրվեցաւ տետրակս ի քաղաքն մատէն և ի ձեռամբ տէրտէն յիսուսի ծառայ յետնեալ համբարձումին և հօրն իմոյ երեմիային և ամէնայն զարմից և զաւակացն ընթերցողք և ունկնդրողք զողորմիս մի տաէ միով հայր մեղայիւ յիշէ աստուած ողորմի իւրեանց և իւր նընջեցելոցը հոգիքն ամէն Այս տետրակս տիրացու համբարձումին և հօրն երեմիային և մօրն նորա խաչերին եղբօրն առաքելին և քրոջն նագլուին կընոջըն ալթունին և որդուն աբրահամին աստուած բարի վայելում տացէ խորին ծերութեանը հասուսցէ Ամէն…:»

*Հ. Ց. ԱՃԱՌԵԱՆ*

# ՊԱՏՄԱԿԱՆ

---

## ՀԻՏՏԻՏՆԵՐՆ ՈՒ ՀԱՅԵՐԸ

(Շարունակութիւն եւ վերջ)

Եթէ Ասորիքի և առոր հիւսիսակողման արձանագրութիւնները 1000էն մինչև 600 տարիներէն են, յայտնի է որ Ասորիքի Համա կոչուած տեղը գտնուածները՝ Համաթի թագաւորներուն են. Ջերաբլիս՝ Եփրատի եզերքը հին Կարկեմիշի սահմանները գտնուածները՝ Կարկեմիշի թագաւորներուն են. Հիւսիսային Ասորիք՝ Մարաշի մէջ գտնուածները՝ Գուրգումի թագաւորներուն են, որոնց մայրաքաղաքն էր Մարկաշ. ուրեմն այս արձանագրութիւններն այլ և այլ փոքրիկ պետութիւններու թագաւորներուն են, և ոչ թէ մեծ պետութեան մը՝ որուն այս երկիրները վերաբերած ըլլան: Հետեւաբար ի զուր կը փնտռենք ասոնց մէջ իրարու յարաբերական խմբեր, որոնք կարող ըլլան թագաւորներուն երկիրներուն սահմանը մեզի ցուցընել. մանաւանդ թէ՝ առոր հակառակ այն տեղերն ուր մենք — այսինքն գլխաւորաբար՝ արձանագրութիւններուն սկիզբը՝ «թագաւոր» բառէն յառաջ — թագաւորին անուան կը սպասենք, կը գտնենք այլ և այլ բացատրութիւններ՝ գտնուած տեղւոյն համեմատ: Ուստի խնդիրն այն է՝ որ գիտնանք թէ ո՛ր արձանագրութիւններու մէջ ինչ անուններ գտնելու յոյս ունինք: Եթէ արձանագրութիւններու մերձաւոր ժամանակագրութիւնը զայս չորոշէր, այսինքն՝ եթէ չգիտնայինք օրինակի համար՝ որ ամենահին արձանագրութիւնները դժուարաւ կրնան 1000էն (Նախ Ք. գ.Քր.) շատ աւելի հին ըլլալ, իսկ նորագոյնները 711էն (Ն. Ք. գ.Քր.) ետքը չեն կրնար ըլլալ, որ տարին

digitised by A.R.A.R.@